

Գասպարիի գործով դատարանն արգելեց տեսաձայնագրումը՝ փրկելու ոստիկան-տիկնանց «վարժաբեկումից»

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին աստիկանի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Ռուբեն Ներսիսյանի վարույթում է գտնվում ոստիկանության հերթական հայցն ընդդեմ քաղաքացիական ակտիվիստ Վարդգես Գասպարիի: Այս գործով 18.09.2014թ. կայացած դատական նիստին երեք հայցվորներից ներկայացել էր միայն ոստիկանության Կենտրոնի բաժնի իրավախորհրդատու Սոնա Մելիքյանը, մյուս երկուսը դիմում էին ներկայացրել՝ դատավարությունն իրենց բացակայությամբ անցկացնելու մասին: Անցած դատական նիստին ևս միայն Սոնա Մելիքյանն էր ներկայացել, և դատարանը, խախտելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի պահանջները, նիստը կամայական որոշմամբ հետաձգեց, որպեսզի չներկայացած երկու ոստիկաններին հնարավորություն տա մասնակցելու, մինչդեռ վերջիններս, լինելով պատշաճ ծանուցված, նման ցանկություն չէին հայտնել:

Ոստիկանությունն ընդդեմ քաղաքացիների՝ բոլոր գործերով հայցվոր ոստիկաններն առարկում են նիստերի տեսանկարահանմանը՝ լրատվության միջոցներով և սոցցանցերում դրանց տարածումն ու դրանց տակ մեկնաբանություններ գետեղելու հնարավորությունը կանխելու պատճառաբանությամբ, քանի որ, նրանց ասելով, մեկնաբանություններով ընթերցողները «վարժաբեկում են» (բառի արտասանությունը նույնպես ոստիկաններինն է) իրենց: Ոստիկանության իրավախորհրդատու Սոնա Մելիքյանն էլ, բացառություն չդրսևորելով, առարկեց լրագրողների՝ դատավորին ուղղված՝ նիստը տեսաձայնագրելու թույլտվությանը, և «որակումներից գերծ մնալու» համար առաջարկեց բավարարվել միայն դատարանի դահլիճում կատարվող ձայնագրությամբ: «Զերծ մնանք սեփական նկարները, ֆոտոները կամ տեսաձայնագրությունը գետեղելուց սոցիալական կայքերում կամ լրատվության այլ միջոցներում», - ոստիկանության դիրքորոշումը փոխանցեց Սոնա Մելիքյանը:

Իսկ ոստիկաններից տուժած ու նրանց կողմից հետապնդվող քաղաքացիներն իհարկե կողմ են հրապարակային դատավարությանը: Վարդգես Գասպարին պնդեց, որ լրագրողներին թույլատրվի ձայնագրել, տեսագրել և լուսաբանել դատավարությունը, քանի որ ժողովրդավարության սկզբունքներից է բոլոր տեսակի, հատկապես քաղաքացիական նշանակության գործընթացների թափանցիկությունը: Մասնավորապես անդրադառնալով իր գործին՝ նա հավելեց. «Քաղաքացին իր գնահատականներն է հնչեցնում պետական մարմնի՝ ոստիկանության վերաբերյալ, ինչը հայցվոր կողմը գնահատել է որպես վիրավորանք. սա հասարակական խնդիր է, և քաղաքացիական հասարակությունն ու ժողովրդավարությունը պահանջում են, որ լուսաբանվի: Իսկ այն, ինչ նորից բնական է, հանցագործ աշխարհը ընդհանրապես դեմ է թափանցիկությանը, բոլոր հանցագործությունները կատարվում են սքողված և թաքուն կերպով: Ու եթե դատարանը այնպիսի մոտեցում ցուցաբերի, որ արգելի նիստը տեսանկարահանել, ուրեմն որոշում է կայացնում հոգուտ հանցագործ աշխարհի և խավարասերների»: Պատասխանողի ներկայացուցիչ, փաստաբան Լուսինե Հակոբյանը, դատական նիստի տեսաձայնագրման անհրաժեշտությունը հիմնավորելով՝

պարզաբանեց դատավորին, թե ինչու հայցվոր ոստիկանի միջնորդությունն ու պատճառաբանությամբ տեսանկարահանում թույլ չտալն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում: ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով ամրագրված խոսքի ազատության հիմնարար իրավունքը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք կարող է փնտրել, ստանալ, տարածել տեղեկություններ և գաղափարներ՝ առանց պետական մարմինների միջամտության: Եվ որ այդ միջամտությունը հնարավոր է միայն Սահմանադրության 43-րդ հոդվածի պահանջների առկայությամբ, այն է՝ եթե այն սահմանված է օրենքով, հետապնդում է իրավաչափ նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում: Տվյալ դեպքում լրագրողներն իրենց խոսքի ազատության իրավունքն իրականացնում են տեսանկարահանման միջոցով, ինչի արգելումը, լրատվամիջոցի խոսքի ազատության սահմանափակումն անհրաժեշտ չի ժողովրդավարական հասարակությունում: Այս կապակցությամբ փաստաբանը վկայակոչեց նաև ՄԻԵԴ-ի այն դիրքորոշումը, որ բոլորը պարտավոր են հանդուրժողական լինել խոսքի ազատության դրսևորումների նկատմամբ, նույնիսկ եթե դրանք առաջ են բերում որոշ անձանց վրդովմունքը և անհանգստությունը: Իսկ հայցվորի բացատրությունը, թե տեսանկարահանումների հետ ինտերնետային կայքերում հայտնվում են ինչ-ինչ մեկնաբանություններ, Լուսինե Հակոբյանի դիտարկմամբ, նույնպես չի բխում մեր բոլորի՝ ժողովրդավարական, բաց հասարակությունում ապրելու հրամայականից: Նախ համացանցը բաց տարածք է, յուրաքանչյուրը կարող է իր սեփական մեկնաբանություններն անել այնտեղ, նաև հաստատել կամ հերքել այնպիսիք, որոնք իր սրտով չեն, և բացի այդ, վիրավորական արտահայտությունների դեպքում միշտ էլ կարելի է դիմել լրատվամիջոցի խմբագրակազմին՝ պահանջելով հեռացնել դրանք մեկնաբանությունների դաշտից:

Դատավորի ճշգրտող հարցին՝ ՄԻԵԴ-ի դիրքորոշումն ընդհանրապես՞, թե՞ դատական նիստերի տեսա և լուսանկարահանմանն է վերաբերում, փաստաբան Տիգրան Եգորյանը պատասխանեց՝ խոսքի ազատությանն ընդհանրապես: «Սակայն կիրառելի է դատական նիստերի ընթացքում տեսանկարահանման միջոցով այս սկզբունքի պահպանման հարցը քննարկելիս»: Դատավոր Ներսիսյանը, սակայն, վկայակոչելով Քաղ. դատ. օր.-ի 114-րդ հոդվածը՝ որոշում կայացրեց չթույլատրել նիստի տեսանկարահանումը՝ պատճառաբանելով այն միայն հայցվոր կողմի առարկությամբ. «Դատարանը ուղղակի չի կարող թույլատրել՝ անկախ մյուս մասնակիցների և դատարանի ցանկությունից», - հարցը հոգուտ ոստիկանության լուծելով՝ բացատրեց դատավորը: Տիգրան Եգորյանն առարկեց՝ ասելով, որ դատավորը սխալ է մեկնաբանում Քաղ. դատ. օր.-ի նշված՝ 114-րդ հոդվածը, որը հստակ սահմանում է, որ տեսաձայնագրումը կամ լուսանկարահանումը իրականացվում է դատարանի թույլտվությամբ և կողմերի համաձայնությամբ: Խոսքը սակայն փոխադարձ համաձայնության մասին չէ, և կողմերից յուրաքանչյուրը կարող է իր դիրքորոշումն ունենալ: Դատավորը, փաստաբանին ընդհատելով, այդպես էլ ամբողջ նիստի ընթացքում հնարավորություն չտվեց իր առարկությունները ներկայացնելու: Եվ արդյունքում, մոտ 40 րոպե նախագահողի կողմից նիստը ձգձգելու հետևանքով աշխատանքային օրն ավարտվեց:

Ինչպես և նախորդ նիստերին, այս անգամ էլ դատավորը չմոռացավ անդրադառնալ հաշտության հարցին: Հայցվորը, մերժելով դատավորի՝ վեճը հաշտությամբ լուծելու առաջարկը, պնդեց հայցի պահանջը՝ պարտավորեցնել պատասխանողին ընդունել հրապարակավ վիրավորանք հասցնելու փաստը, ներողություն խնդրել և փոխհատուցում վճարել սահմանված նվազագույն աշխատավարձի 300-ապատիկի չափով: Տիգրան Եգորյանն էլ դեմ արտահայտվեց հաշտությանը՝ հիշեցնելով, որ արդեն գրավոր առարկություն են ներկայացրել հայցադիմումին: Իսկ Լուսինե Հակոբյանը միայն ավելացրեց, որ հաշտության որոշումն իրականում հայցվորներինը չէ, քանի որ դա նրանց հայցը չէ: «Մա ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաների, ընդհուպ մինչև ոստիկանապետի ուղղորդմամբ ներկայացված հայց է: Այդ իսկ պատճառով մենք չենք գտնում, որ հայցվոր Մոնա Մելիքյանը այստեղ ընդհանրապես իրավասու է խոսելու հաշտությունից», - հայտարարեց պատասխանողի ներկայացուցիչը:

Դատավոր Ներսիսյանը հայտարարեց, որ նիստը կշարունակվի հաջորդ օրը, սեպտեմբերի 19-ին՝ անտեսելով Վարդգես Գասպարիի և նրա ներկայացուցիչների խնդրանքը՝ նիստը մեկ այլ օր նշանակելու մասին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գասպարին և իրենք դատավորի նշանակած օրն ու ժամին ստիպված են մասնակցելու Գասպարիի դեմ ոստիկանության հայցով մեկ այլ նիստի:

Չնայած Գասպարիի և իր ներկայացուցիչների համար ստեղծվել էր մասնակցության անհնարինություն սեպտեմբերի 19-ին նշանակված նիստին ներկայանալու հարցում, դատավոր Ռ. Ներսիսյանը, այդուհանդերձ, կայացրել է նիստը և հաջորդ նիստը նշանակել 22.10.2014թ., որին չէր էլ ներկայացել՝ վատառողջ լինելու պատճառաբանությամբ՝ առանց կողմերին այդ մասին ծանուցելու:

Հաջորդ նիստը նշանակված է ս.թ. նոյեմբերի 24-ին, ժամը 10.30-ին:

Ադրինե Թորոսյան